

դղեակները շքեղացման»⁽²²⁾, մենք իրենց կարգին պիտի տեսնենք թէ զորքը շատ ընդարձակ չափերով գործածուած է կրօնական հաստատութիւններէն եւ հասարակ թողովուրդէն. թէ եւ այս հաստուածով մենք հոս պիտի ծանրանանք միայն Հայ Մեծատանց քով զորքին ունեցած դերը մասին:

Բնական է որ Հայ արքունիքէն ազդուելով՝ հայ ազնուականութիւնն ալ զորք գործածէր համանման ձեւով: Հայ ազնուականին տունն ալ կահաւորուած էր գլխաւորապէս զորքերով: Հայ ազնուականութիւնն ալ կը ճաշէր զորքի վրայ ափուուած սեղանի վրայ: Փաւրտոս Բիւզանդի մօտ կը գտնենք մեր առաջին վկայութիւնը առ այդ: Լուսաւորչի երկու ցովակեաց թոռները՝ Պապ եւ Աթմանազինէս՝ իրենց մօր կողմէ արքունի դերդաստանէ սերած, խենէշ, շուսյոս, հաճոյասէր երկուորեակներ էին, որոնք ըստ մեր պատմիչին Աշտիշատի Լուսաւորչաշէն եկեղեցւոյն եպիսկոպոսարանին մէջ կը սարքեն խընճոյք մը, «Եւ մինչ էին յուրախութեան մեծի, բազմեալք էին ի ներքս եպիսկոպոսանոցին, ուտէին եւ ըմպէին, յանկարծակի հրեշտակ Տեառն երեւեցաւ ի նմանութիւն փայլատական, եւ հարեալ սատակէր գերկոսեան դեղբարսն միանգամայն ի բազմականին անդ: Եւ այլ մարդիկն՝ որք էին անդ, որք տաճարակիցք էին ուրախակիցք եւ բազմականակիցք էին, որք միանգամ անդ դիպեցան, առ հասարակ թողին եւ փախեան, եւ ելին արտաքս ի տաճարէ անտի»⁽²³⁾: Տարակոյս չկայ որ Բիւզանդի պատմածը վէպ մըն է, որոնցմով այնքան ճոխ էր իր Պատմութիւնը, եւ մեր պատմիչին միւս վէպերուն նման իր այս վէպն ալ բարոյական դաս մը տալու նպատակով առնուած է գործին մէջ, պարզապէս ըսել ուղելով, որ եթէ նոյնիսկ Լուսաւորչի թոռներն ըլլաք եւ մեղանչէք՝ աստուածային արդարութիւնը պիտի պատժէ ձեզ: Սակայն Բիւզանդի վէպին բարոյականը չէ որ մեզ կը հետաքրքրէ, այլ այն որոշ վկայութիւնը թէ հայ ազնուականութիւնը Դ դարէն իսկ ճաշ եւ խնճոյք կը սարքէր ափեալ զորքերու վրայ: Բիւզանդ կը գործածէ ինքնատիպ բառ մը բազմականակիցք՝ այսինքն գորգակիցք: Նոյն պատմիչը՝ այլուր ալ նկարագրելով Արշակ Բ-ի օրերուն Հայ արքունեաց ճոխութիւնը, մեծամբոխ խնճոյքներ երբ «ինն հարիւր բարձ՝ որ մտանէր ի ժամ տաճարին ուրախութեանն բազմակալացն կարգելոց. թող զտոնկայս գործակալութեանն սպասու»⁽²⁴⁾: Այսինքն թէ ինք հարիւր «բարձ» պատիւ եւ աստիճան ունեցող հայ ազնուականներ կը մասնակցէին արքունի խնճոյքին ուրախութեան «բազմակալացն կարգելոց», ըլլալով միայն զորքերուն կամ զորքին վրայ բազմողները, թող սպասար-

(22) Արարական շրջանի Ֆէոդ. հայ քաղաք. եւ գիւղ. միջեւ ստեղծուած հակադր.: Յ. Չօրեան: Տեղեկագիր Գիւ. եւ Արուեստ. ինստ.: Երեւան, 1928, թիւ 3, էջ 14: Օգտուած է Արիւր. էջ 28 հմմտ:

(23) Պատ. Հայոց: - Ս. Ղազար, 1914, գլուխ 19:

(24) Անդ, էջ 93: Տաճար՝ հին հայոց մօտ կը նշանակէր ճաշարան: